Հ. Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՂՄԱՊԱՏԿԱԿԱՆ ԲԱՅԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայոց լեզվի բաղմապատկական-սաստկական կերպածանցավոր բայակազմությունը բովանդակության և արտահայտության պլաններում ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցից մի քանիսի համառոտ բնութագրմանն է նվիրված սույն հոդվածը։

1. Բաղադրյալ կերպածանցներ (միաձույլ և տարբալուծելի).— Հայերենը, առանձնապես բարբառները և ժողովրդական-խոսակցական լեզուն, հարուստ են բաղմապատկական և սաստկական բաղադրյալ կերպածանցներով[1]*, որոնք երկու տասնյակից ավելի են։ Ներքին կառուցվածքի տեսակետից դրանք հիմնականում բաժանվում են երեք խմբի. 1. երկածանց կամ երկանդամ բաղադրյալ, 2. եռածանց կամ եռանդամ բաղադրյալ և 3. քառածանց կամ քառանդամ բաղադրյալ։ Հենց այս խմբավորման հիմունքով էլ ընդհանրապես բաղմապատկական և սաստկական ածանցավոր բայաձևերը բաժանվում են չորս տեսակների. 1. միածանց կազմություններ* (ծեծկել)*, 2. երկածանց կամ երկանդամ բաղադրյալ կերպածանցավոր կազմություններ* (ծեծկոտել)*, 3. եռածանց կամ եռանդամ բաղադրյալ կերպածանցավոր կազմություններ* (ծեծկրոտկել) *և 4. քառածանց կամ քառանդամ բաղադրյալ կերպածանցավոր կազմություններ* (շլտորտկել)։

Հաշվի առնելով բաղադրման բնույթը և որոշ կազմություններում բաղադրյալ ածանցների կոնկրետ դրսևորումները, դրանցից մի քանիսը միաժամանակ պայմանականորեն կարող ենք համարել միաձույլ կամ ելակետային ածանցներ։ Դրանք այն կերպածանցներն են, որոնք բուն կազմությամբ լինելով բաղադրյալ՝ երկածանց կամ եռածանց (երկանդամ բաղադրյալ կամ եռանդամ բաղադրյալ), բաղմապատկական և սաստկական մի շարք կազմություններում հանդես են գալիս ածանցակազմիչ բաղադրիչների սերտ միասնությամբ, տվյալ կոնկրետ բայաձևերում անտարբալուծելի են և դիտակցվում են իբրև մեկ ամբողջական միակազմ ածանց։ Այսպես, օրինակ, խառն + շտ + ել, մանդ + ռտ + ել *ձևերում -շտ- և -ռտ- բաղադրյալ կերպածանցները հնարավոր չէ բաժանել առանձին բաղադրիչների։ Նման դեպքերում բաղադրյալ կերպածանցները, իրենց անտարբալուծելիությամբ, հանդես են գալիս իբրև միաձույլ կամ ելակետային ածանցներ, որոնք լրացուցիչ բաղադրման տեսակետից նաև կառուցվածքային այն առանձնահատկությունն ունեն, որ դրանց հետ նոր ածանցի կցումը գերազանցապես կատարվում է աջ եզրից (հմմտ.* խառն + + շտկ + ել, մանդ + ռտոռ + ել)։

---

1 *Բաղադրյալ են այն կերպածանցները, որոնք բաղադրված են մեկից ավելի ածանցակազմիչներից կամ տարրերից։*

Ի հակադրություն այս միաձույլ կամ ելակետային ածանցների, բազմապատկական և սաստկական բուն բաղադրյալ կերպածանցները տարրալուծելի են իրենց ածանցակազմիչ ձևույթների, որոնց բաղադրումը (զուգակցումը) կարելի է ցույց տալ միևնույն բայական բառույթի սահմաններում (հմմտ. ճանկ+ոտոր+ել <ճանկ+ոտ+ել <ճանկ+ո+ել, խատն+շտոր+ել <խատն+շտ+ել, մո+լակ+ալ <մո+լտ+ալ): Սակայն բաղադրյալ կերպածանցների առանձին միավորների բաժանելիությունը ընդհանուր առմամբ որոշակիորեն վերջավորված է և ունի իր սահմանը։ Բաղադրության տարրալուծումը (ձևույթների անջատումը) հնարավոր է կատարել մինչև այն աստիճան, քանի դեռ անջատվող ածանցներից գոնե մեկը պահում է կերպիմաստը և կատարում ձևակազմական այն դերը, ինչ որ կատարում է ամբողջ բաղադրությունը։ Օրինակ, ճետոտկել և վազոտոռել բայաձևերի մեջ -ոտկ- և -ոտոր- բաղադրյալ կերպածանցներից կարելի է անջատել-հեռացնել միայն աջ եզրի -կ- և -որ- պարզ ածանցները (ձևույթները), քանի որ -ոտ-ի տարրալուծումը (-ոտ- <ո+տ-, հմմտ. ճանկոտել <ճանկոել) տվյալ դեպքում չի ապահովում բազմապատկական բայերին հատուկ ոչ ձևական և ոչ էլ իմաստային հատկանիշները. չունենք՝ ճետոել, ճետկել, վազոել և այլն։

Այսպիսով, հայոց լեզվի բազմապատկական և սաստկական բաղադրյալ կերպածանցները որոշ թվով կազմություններում հանդես են գալիս ածանցակազմիչ բաղադրիչների սերտ միասնությամբ և հնարավոր չէ դրանք տարրալուծել, իսկ մի շարք այլ բայաձևերում այդ տարրալուծումը հնարավոր է դառնում այդ բաղադրիչներից գոնե մեկի անկախ ինքնուրույն գործածության հետևանքով։ Բաղադրյալ կերպածանցների առանձին բաղադրիչների ձևիմաստային կայունության գիտակցումը հայերենում սերտորեն կապված է դրանց տարանջատման, տարրալուծման հանգամանքի հետ, քանի որ այդ գիտակցման համար կիրառելի և լրիվ բավարար է ածանցակազմիչ ձևույթների անջատման մեթոդը, որով ստեղծվում է ձևակազմական հետևյալ հակադրությունը. կարելի է՝ ճանկոել, ճկոել, ծակոտել և այլն, չի կարելի՝ ծակոել, բափոել և այլն։

2. Բազմաձևություն.— Հայերենի բազմապատկական-սաստկական բայակազմության բազմաձևությունը արտահայտվում է ոչ միայն պարզ և բաղադրյալ կերպածանցների և կառուցվածքային ձևատիպարների (մոդելների) առատությամբ, այլև միևնույն բայական բառահիմքի հետ տարբեր ածանցների միացման հնարավորություններով։ Կերպածանցների՝ մեկը մյուսով փոխարինումը ընդհանուր առմամբ կապված է գործողության կամ եղելության բնութագրման հանգամանքի հետ և հանդիսանում է թույլ կամ ուժեղ արտահայտված կերպիմաստային երանգավորման դրսևորումներից մեկը։ Ածանցակցման այս բազմաձևությունը առաջացնում է նույնարմատ պարզ կամ կրկնավոր բայատիպարների զուգահեռ տարբերակներ, որոնք գործածության տեսակետից մեծ մասամբ տեղայնացված են։ Ձևերի զուգահեռությունը կամ զուգաձևությունը առավելապես հատուկ է մեր բարբառներին և ժողովրդական-խոսակցական լեզվին, իսկ արդի գրական արևելահայերենում դա հնարավորին չափ հասցված է նվազագույնի։

Շատ սովորական է, օրինակ, -ոտ- և -ոտ- // -ոտ- ածանցները մեկը մյուսով փոխարինելը, որով ածանցավոր բայաձևերում կատարվում է բազմապատիկության և սաստկության իմաստների շեշտվածության տարբերակում.

Կրկնավորների մեջ հատկապես տարածված է -ոտ ↔-որ- փոխարինումը (հմմտ. ծակծկոտել և ծակծկորել), որն իմաստերանգային զանազանություն գրեթե չի առաջացնում։ Այսպիսի կազմություններում -ոտ-ն ու -որ-ը իմաստով իրար ծածկող համանիշ ածանցներ են։

Ձևա-իմաստային դրսևորումներով ավելի հարուստ են երկուսից ավելի ածանցների միջև կատարվող փոխարինումները, միայն թե այս դեպքում մենք գործ ունենք արդեն ածանցների բաղադրման երևույթի հետ։ Հատկանշական է, որ հայերենում միևնույն բայական բառահիմքը կարող է միանալ առավելագույնը չորս բազմապատկական և սաստկական պարզ կամ բաղադրյալ տարբեր կերպածանցների հետ, այսինքն՝ բազմաձևությունը սահմանափակվում է չորս փոխարինումով կամ ածանցավոր չորս տարբերակով։

Հասկանալի է, որ ոչ բոլոր բազմապատկական և սաստկական բայերն են, որ ունեն իրենց այլածանց տարբերակները։ Շատ են նաև միաձև կազմությունները։

Բերենք դուգահեռ ձևերի մի քանի նմուշ.

ծակել	1.	ծակ + ոտ + ել
	2.	ծակ + ոտ + ել
ծեծել	1.	ծեծ + ոտ + ել
	2.	ծեծ + կ + ել
	3.	ծեծ + կոտ + ել
կոխել	1.	կոխ + ոտ + ել
	2.	կոխ + ոտ + ել
	3.	կոխ + կոտ + ել
	4.	կոխ + կոտկ + ել
խառնել	1.	խառն + ոտ + ել
	2.	խառն + շտ + ել
	3.	խառն + շտկ + ել
	4.	խառն + շտոր + ել

Երկշարք, եռաշարք և քառաշարք այս ածանցավորները և՛ արտահայտության պլանում, և՛ բովանդակության պլանում իրենց ածանցազուրկ նախատիպերի համեմատությամբ (այսինքն՝ հորիզոնական դիրքում) ներկայացնում են քերականական կարգերին հատուկ երկանդամ հակադրություն՝ «չկրկնվող գործողություն — կրկնվող գործողություն» և «չկրկնվող գործողություն — կրկնվող սաստկական կամ տևական գործողություն», իսկ շարքերը վերից վար, մեր օրինակներում, իրար նկատմամբ ունեն հետևյալ հարաբերությունները. 1-ինը 2-րդից տարբերվում է բազմապատկական գործողության սաստկական բնույթով, 1-ինը 3-րդից կամ 4-րդից՝ նույն հատկանշով, միայն թե վերջիններիս առավել սաստկականությամբ և այլն։

Ելնելով վերոհիշյալից, կարելի է սահմանել հայերենի բազմապատկական-սաստկական բայակազմության ձևա-իմաստային առանձնահատկություններից մեկը ևս, որը է՝ կերպիմաստային բնութագրման տարբերություն-

ներ ունեցող ձևերի բազմազանությամբ պայմանավորված ածանցման աստիճանականությունը կամ բաղադրման աստիճանները: *Ինչպես տեսանք, կրկնության ընդհանուր դաղափար արտահայտող պարզ ածանցավոր և կրկնավոր ածանցազուրկ բայաձևերը կարող են ունենալ սաստկության, զորացման և տևականության իմաստով երանգավորված իրենց տարբերակները, որոնց մեջ ածանցների փոխարինմանը զուգահեռ առկա են նաև ծագումնաբանորեն բաղադրյալ ածանցների լրացուցիչ բաղադրումներ։ Հայտնի է, որ բազմապատկական և սաստկական բաղադրյալ կերպածանցները ավելի ուժեղացնում և սաստկական երանգ են հաղորդում բայիմաստին։ Բաղադրման հետևանքով բացահայտորեն շեշտվում է նաև գործողության բազմապատիկության կամ կրկնության դաղափարը։ Ածանցի ֆունկցիոնալ նշանակության այս հաղեցումը, որ կստացվում է բաղադրման կամ լրացուցիչ բաղադրման միջոցով, հենց հանդիսանում է հայերենի բազմապատկական-սաստկական ածանցման աստիճանականության կամ բաղադրման աստիճանների իմաստային և կառուցվածքային հատկանիշների ընութագրական կողմը։*

Հայերենի բաղադրյալ կերպածանցները մենք բաժանել ենք երեք խմբի. երկածանց կամ երկանդամ բաղադրյալ, եռածանց կամ եռանդամ բաղադրյալ և քառածանց կամ քառանդամ բաղադրյալ, իսկ ածանցավոր ձևատիպարների համար, ըստ ածանցների քանակական բաշխման, ընդունել չորս տեսակներ. միածանց, երկածանց, եռածանց և քառածանց։ Ըստ այսմ էլ, բազմապատկական-սաստկական ածանցավոր բայակազմությունն ունի ձևա-իմաստային մի քանի աստիճաններ.

1. Միածանցավոր ձևեր կամ ածանցման առաջին աստիճան (ծակել> ծակոտել, ծակոտել, *կոխել>* կոխոտել, կոխոտել, *խառնել>* խառնշտել, մոլտալ։ *Այս աստիճանում այլածանց զուգակից կազմություններն ունեն զուտ իմաստերանգային տարբերակումներ, իսկ կառուցվածքային տեսակետից դրանք իրար համարժեք են։*

2. Երկածանցավոր ձևեր կամ ածանցների բաղադրման առաջին աստիճան, այսինքն՝ այս աստիճանում պարզ ածանցները բաղադրվում են, իսկ նախորդ աստիճանին վերաբերող միաձույլ կամ ելակետային բաղադրյալ ածանցները[2] *ենթարկվում են լրացուցիչ բաղադրման (թապլտել>* թապլտկել, *ծեծկել>* ծեծկոտել, *կոխոտել>* կոխկոտել, *խառնշտել>* խառնշտկել, խառնշտոռել, *մոլտալ>* մոլտկալ):

3. Եռածանցավոր ձևեր կամ ածանցների բաղադրման երկրորդ աստիճան, այսինքն՝ այս աստիճանում նախորդ աստիճանի լրացուցիչ բաղադրման ենթարկված բաղադրյալ ածանցները նորից բաղադրվում են (գլտորել> գլտորտել, *կոխկոտել>* կոխկոտկել):

4. Քառածանցավոր ձևեր կամ ածանցների բաղադրման երրորդ աստիճան, այսինքն՝ այս աստիճանում նախորդ աստիճանի կրկնաբաղադրված ածանցները նորից ենթարկվում են լրացուցիչ բաղադրման (գլտորտել> գլտորտկել):

---

2 *Կրկնենք, որ գերազանցապես կոնկրետ կիրառության և ածանցակազմիչ բաղադրիչների անտարբալուծելիության հանգամանքները հաշվի առնելով է, որ բաղադրյալ ածանցների մեջ առանձնացրել ենք այսօրինակ կերպածանցների խումբ։ Իրականում դրանք բաղկացած են մեկից ավելի ածանցներից (հմմտ.* ճեղքոտել <ճեղք + ո + տ + ել, կոխոտել <կոխ + ո + տ + ել), *սակայն նկատի ենք ունեցել դրանց միաձուլությունը և բաղադրությունը վերադրել ոչ թե բաղադրման, այլ ածանցման առաջին աստիճանին։*

Այս աստիճաններից վերջին երկուսը հայերենում չափազանց սակավադեպ են և նույնիսկ կարող են գործնականորեն երբեմն հաշվի չառնվել։ Դրանք ավելի շուտ կառուցվածքային հնարավորություններ են, որոնցից մեր լեզուն համեմատաբար քիչ է օգտվել։

Բաղադրյալ կերպածանցների քանակական կողմն արտահայտվում է մեր գործածած «երկածանցավոր», «եռածանցավոր» և «քառածանցավոր» անվանումների մեջ (միաձույլները պայմանականորեն համարել ենք միածանցավոր ձևեր), իսկ բաղադրման աստիճանների առանձնացումը միայն կապված է այդ ածանցների բաղադրելիության հանգամանքի հետ, որի պատճառով էլ, օրինակ, եռածանցավոր ձևերը համապատասխանում են բաղադրման երկրորդ աստիճանին։ Հմմտ. կոխ+կ+ոտ+ել, որ բաղադրման առաջին աստիճանի արդյունք է, երկածանցավոր ձև (կոխ+ոտ+ել և -կ-), կոխ+կ+ոտ+կ+ել, որ բաղադրման երկրորդ աստիճանի արդյունք է, եռածանցավոր ձև (կոխ+ +կ+ոտ+ել և -կ-)։

Ինչպես նշվեց, ածանցման աստիճանականությունը կամ բաղադրման աստիճանները պայմանավորում են կրկնվող և սաստկական գործողության կամ եղելության կերպային բնութագրման տարբեր երանգները՝ բայմատակական-սաստկական իմաստների շեշտվածության դրսևորումներով։ Ուրեմն, բայակազմական այդ երևույթը զուտ ձևաբանական-քերականական արժեք ունենալուց բացի, ունի նաև բերականական համապատասխան իմաստների թույլ և ուժեղ արտահայտության տարբերակիչ հատկանիշ։

Բաղադրման այս աստիճաններին պատկանող հատկապես նույնարմատ զուգակից բայաձևերը, ամենայն հավանականությամբ, նախապես պահպանել են իմաստային շատ որոշակի տարբերակումներ, որոնք աստիճանաբար թուլանալով վերացել են, իսկ երբեմն էլ խառնվել։ Ճիշտ չէր լինի ձևերի այս բազմազանությունը բացատրել մեր բարբառներին հատուկ բազմաձևության սոսկ քմահաճ նախընտրությամբ։ Դրանց զուգահեռ գոյությունն ու գործածությունը լեզվական միևնույն միջավայրում պետք է որ կապված լիներ իմաստային ինչ-որ այլարնույթ հատկացումների հետ։

3. Բազմերանգություն.— Հայերենի բազմապատկական-սաստկական պարզ կամ բաղադրյալ կերպածանցները հիմնականում բազմերանգ են, այսինքն՝ արտահայտում են կրկնության և սաստկության ընդհանուր գաղափարի մերձավոր տարբեր իմաստերանգներ, կամ էլ ունեն իմաստային համեմատաբար ավելի ինքնուրույն առումներ։

Փաստերը ցույց են տալիս, որ հայերենում, օրինակ, խստորեն բևեռացված «կրկնության քերականական միայն ա յս իմաստի» կերպածանցներ չկան, և մեր պարզ կամ բաղադրյալ ածանցները, որպես բազմապատիկության և սաստկության բերականական իմաստների ձևաբանական ինքնուրույն ցուցիչներ, սերտորեն կապվում են համանշության հետ, քանի որ բոլորն էլ ցույց են տալիս գործողության կրկնություն կամ սաստկությամբ կրկնվող գործողություն, որոնք կարող են իրագործվել այլապան առնչություններով ու հարաբերություններով։

Ածանցների համանշությունը պարզորոշ երևում է հենց առաջին հայացքից. երեք տասնյակից ավելի տարբեր ածանցներ միավորվում են քերականական ընդհանուր նույն իմաստներն արտահայտելու իրենց հատկությամբ։ Իսկ նույն ածանցների բազմերանգության, իմաստային միաձուլության կամ

բազմիմաստության համար բերենք այսպիսի մի հանրահայտ իրողություն. -ում- ածանցը մի դեպքում գուտ կրկնության ցուցիչ է (ծակոտել, գատկոտել). մեկ այլ դեպքում՝ բազմասուբյեկտության (նստոտել, կանգնոտել), -ում-ը մի դեպքում առավելապես սաստկությամբ կրկնվող գործողություն է ցույց տալիս (շխկոտալ), մեկ այլ դեպքում՝ բազմաօբյեկտություն (ծախոտել, հավաքոտել). -ում-ն մի դեպքում կարող է կազմել անդրադարձության-բազմապատկական բայեր (հանվոտել, բերվոտել), մեկ այլ դեպքում՝ բազմապատկական (փնտրոտել) և այլն, և այլն։

Այսպիսով, բազմապատիկության-սաստկության կերպի բերականական կարգի արտահայտության պլանի գանազան միավորները՝ ցուցիչները, ածանցները, բովանդակության պլանում թեև լայն առումով հանգում են միևնույն ընդհանուր կերպային նշանակությանը, սակայն հենց այդ պլանում էլ դրսևորում են որոշակի հստակությամբ տարբերակվող երանգային բազմազանություն, որն ի հայտ է գալիս մեծ մասամբ կերպիմաստային հատկանիշների բնույթի և գործողության կամ եղելության առարկաների այլևայլ առնչությունների մեջ։

Նկատի ունենալով այս հանգամանքը, գուտ իմաստային կողմի հաշվառումով, հայերենի բազմապատկական և սաստկական ածանցավոր բայերը մենք դասդասել ենք մի քանի խմբերի, յուրաքանչյուրի համար հիմք ընդունելով իմաստային կոնկրետ որևէ էական հատկանիշ։ Եվ հայերենում չկա կերպածանցավոր թեկուզ և մեկ բայաձև, որ չպատկանի ստորև ներկայացվող խմբերից որևէ մեկին։

1. Բայաձևեր, որոնք ցույց են տալիս գործողության կրկնություն կամ բազմապատիկություն. գործողությունը կարող է կատարվել մեկի կամ շատերի կողմից, միևնույն կամ տարբեր տեղերում, մեկ կամ շատ առարկաների նկատմամբ և այլն։ Կրկնվող այս գործողությունը կարող է ունենալ նաև սաստկականության կամ տևականության հավելյալ երանգ։ Հմմտ. ցատկոտել, զատկրտել, կապոտել, կապոտել, ծամծմոռել, ծումռատել, բոչկոտել, լրկտել, կտրատել, ծեծկոտել, պատռոտել, փնտրտել, վազվոտել, վազվոտռել, երեռտալ և այլն։ Սրանք բազմապատկական և բազմապատկական-սաստկական բայեր են, որոնք կազմում են քննարկվող բայականի ճնշող մեծամասնությունը։

2. Բայաձևեր, որոնք կազմությամբ բնաձայնական են և հիմնականում արտահայտում են սաստկությամբ կրկնվող գործողության գաղափար։ Հմմտ. ղխկրտալ, մոլտկալ, ֆշոտալ, շխկրտալ և այլն։ Սրանք սաստկական-բազմապատկական բայեր են։

3. Բայաձևեր, որոնք ցույց են տալիս կրկնվող կամ բազմապատիկ այնպիսի գործողություն, որ կատարում են անպայման մեկից ավելի անձեր կամ առարկաներ։ Հմմտ. նստոտել, ատկոտել, պառկոտել, բնոտել և այլն։ Սրանք բազմասուբյեկտ-բազմապատկական բայեր են, որոնք չունեն այլածանց սաստկական տարբերակներ։

4. Բայաձևեր, որոնք ցույց են տալիս կրկնվող կամ բազմապատիկ այնպիսի գործողություն, որ կատարում են մեկ կամ ավելի անձեր անպայման մեկից ավելի կամ շատ առարկաների նկատմամբ։ Հմմտ. ծախոտել, ծախոտել, կախոտել, հավաքոտել, ծախծխոռել, պոկոտել, պոկոտել և այլն։ Սրանք բազմաօբյեկտ-բազմապատկական բայեր են, որոնք կարող են նաև սաստկական երանգ ստանալ (օրինակ, -ում- ածանցավորները)։

5. Բայաձևեր, որոնք ցույց են տալիս կրկնվող կամ բազմապատիկ այնպիսի գործողություն, որ փոխադարձաբար կատարվում է մեկից ավելի անձերի միջև։ Հմմտ. զզվտել, պազվտել և այլն։ Սրանք փոխադարձության-բազմապատկական բայեր են, որոնք նույնպես ունեն իրենց սաստկական տարբերակները (օրինակ, պազվոտել)։

6. Բայաձևեր, որոնք ցույց են տալիս կրկնվող կամ բազմապատիկ այնպիսի գործողություն, որ սուբյեկտն անդրադարձությամբ կատարում է ինքն իր նկատմամբ։ Հմմտ. ֆերվտել, հանվտել, ֆորվտել և այլն։ Սրանք անդրադարձության-բազմապատկական բայեր են։

7. Բայաձևեր, որոնք ցույց են տալիս կրկնվող կամ բազմապատկական այնպիսի գործողություն, որ կատարվում է անպայման շատերի կողմից և արտահայտում համատեղ գործելու, միասին մի բան անելու գաղափար։ Հմմտ. ժողվտել[3] և այլն։ Սրանք համատեղության-բազմապատկական բայեր են, որոնց կերպիմաստը հայերենում համեմատաբար թույլ է արտահայտված։ Համատեղության իմաստը ավելի շատ դրսևորվում է մյուս խմբերին պատկանող մի շարք բայերի կրավորական -վ- ածանցավոր կազմություններով (հմմտ. հավաքոտել և հավաքոտվել. ժողոտել և ժողոտվել)։

4. Բնաձայնական կերպածանցներ.— Հ. Աճառյանն իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» ուսումնասիրության չորրորդ հատորի երկրորդ գրքում մանրամասնությամբ քննում է հայոց լեզվի բայագանձի հետաքրքրական և անչափ ճոխ բնագավառներից մեկը՝ բնաձայնական բայակազմությունը։ Նա ըստ կառուցվածքային առանձնահատկությունների հայերենում տարբերակում է բնաձայնական բայերի մի շարք կարգեր, ցույց տալիս դրանց մեջ մտնող բայերի կապակցելի բաղադրիչները, առանձնացնում է այն հնչյուններն ու հնչյունախմբերը (կ, տ, ռ, ր, շտ, ոտ, րտ, ռտկ, րտկ, տկ, ստ, լտ, լտկ և այլն), որոնք հանդես են գալիս հաճախականության իմաստով և կազմում բնաձայնական հաճախական բայեր և այլն։

Կանգ առնենք վերջին հարցի վրա։ Այս հնչյուններն ու հնչյունախմբերը իմաստատարբերիչ դեր են կատարում բնաձայնական նույնարմատ բայերի դրանք ունեցող և դրանք չունեցող ձևերի միջև, այսինքն՝ հնարավոր են դարձնում ձևա-իմաստային հակադրությունը, որը շատ ավելի ցայտուն արտահայտվում է հատկապես նշված հնչյունախմբերն ունեցող կազմություններում (հմմտ. ճվոտալ, մշլտալ. մզրտկալ և այլն)։

Այլաբնույթ բնաձայնական գործողություններ արտահայտելու պահանջով հենց բնաձայնության հիմքի վրա ստեղծված այս հնչյուններից ու հնչյունախմբերից շատերը, իրենց գործածության լայն ընդգրկումների և առանձնապես, սաստկության-զորության կայունացած իմաստների հետևանքով ստացել են բայական ածանցների արժեք և հետո հավանաբար սկսել են գործածվել նաև ոչ բնաձայնական բայերի հետ, սաստկության իմաստի ղուգակցումով ավելի շեշտելով բազմապատիկությունը։ Բնաձայնական բայերի մեջ այդ հնչյունների ու հնչյունախմբերի ածանցական արժեքը պետք է համարել լրիվ քերականացված, քանի որ դրանց միջոցով հաղորդվում է գործողության սաստկության և կրկնության իմաստ և կազմվում այս իմաստից զուրկ նույնարմատ ածանցազուրկ բայերի հակադրություն (հմմտ. դիկալ և դիկրտալ)։

3 Կրկնասեռ բայ է, որ ներգ. ս. նշանակում է «հավաքել», իսկ չեզ. ս՝. «հավաքվել, մի տեղ ժողովվել»։

Բնաձայնական ածանցները ունեն կառուցվածքային շատ կարևոր մի առանձնահատկություն, որով էլ հենց պայմանավորված է հայերենի բազմապատկական-սաստկական և սաստկական բայակազմության ինքնատիպ իրողություններից մեկը. դա բաղադրման կամ լրացուցիչ բաղադրման ենթարկվելու սովորությունն է, բազմապատկական և սաստկական ածանցման աստիճանականությունը, որով կերպիմաստն ավելի ուժեղացվում կամ հավելյալ երանգավորում է ստանում (հմմտ. մոլտալ և մոլտկալ, մզրտալ և մզրտկալ): Բնաձայնական ածանցները աչքի են ընկնում նաև բաղադրության բազմազանությամբ։

Բնաձայնության միջավայրից այս ածանց-հնչյունների ու հնչյունախմբերի անջատումը նշանակում էր նաև դրանց ինչպես ձևաբանական, այնպես էլ իմաստային և՛ անկախացում, և՛ հարստացում։ Ձևաբանական անկախությունը դրսևորվում է նախ և առաջ ոչ բնաձայնական բայերի հետ միանալու հնարավորության մեջ։ Սա արդեն ապացույց է այն բանի, որ ածանցի արժեք ստացած այդ հնչյուններն ու հնչյունախմբերը այլևս ուղղակիորեն չեն կապվում բնաձայնության հետ և գիտակցվում են որպես բազմապատիկության-սաստկության կերպի քերականական կարգի ձևաբանական ինքնուրույն ցուցիչներ։

Իսկ իմաստային հետագա հարստացումը, ընդհանուր գծերով, մենք պատկերացնում ենք այսպես. ի սկզբանե հիմնականում ցույց տալով բնաձայնական բայերի սաստկական իմաստը, այդ ածանցները, անկախանալու ընթացքում, ձեռք են բերել նաև գուտ կրկնության գաղափար արտահայտելու հատկանիշներ, ոչ բնաձայնական բայերում պահպանելով հանդերձ իրենց սաստկականության որոշակի երանգը։

Որ բնաձայնությունից եկած բազմաթիվ ածանցներ ունեն և անկախանալուց հետո անհրաժեշտաբար պահպանել ու այսօր էլ շատ լավ արտահայտում են գործողության սաստկության իմաստ, կարող է հիմնավորվել նաև հետևյալ կերպ. գործողության կամ եղելության բուն կրկնության գաղափարի դրսևորման համար հայոց լեզուն օգտվում է բայակրկնավորներից և հիմնականում -ատ-, -ոտ-, -կոտ- և -տ- բազմապատկական կերպածանցներից, իսկ կրկնվող գործողության կամ եղելության սաստկություններ շեշտելու համար վերցվում են գերազանցապես այն ածանցները, որոնք բնաձայնական բնույթ ունեն (հմմտ. թափոտել և թափոտել, ծակոտել և ծակրտել, ցատկոտել և ցատկոտել)։ Իհարկե, կան նաև կոնկրետ այնպիսի կիրառություններ, որոնցում այս ածանցները սաստկության իրենց իմաստը բոլորովին կորցրել են և հանդես են գալիս միայն բազմապատիկության այս կամ այն նշանակությամբ ու համագոր են գուտ բազմապատկական ածանցներից, օրինակ, -ոտ-ին (հմմտ. ծախոտել և ծախոտել, սատկոտել և սատկոտել)։

Այսպիսով, հայոց լեզվի մի շարք պարզ և բաղադրյալ կերպածանցներ, որոնք հանդես են գալիս բազմապատկական կամ սաստկական, կամ էլ գուտահեռարար սրանց միաձույլ նշանակությամբ, ծագումնաբանորեն կապված են բնաձայնության հետ, ներկայացնում են մեր կերպածանցների ճնշող մեծամասնություն, կարող են բաղադրվել ինչպես իրար, այնպես էլ մյուս կարգի կերպածանցների հետ և լայն գործածություն ունեն որպես բազմապատիկության և սաստկության կերպերի ձևաբանական ցուցիչներ, երբեմն կատարելով նաև բառակազմական դեր։